



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1528-Ա/2

06 նոյեմբերի, 2020 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 704-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ
ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԱՐՇԵՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՏՎՅԱԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ», «ՔՎԱՆՏԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»,
«ՈՌԲՈՏԱՏԵԽՆԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ
ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 984-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 4-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հունիսի 8-ի N 704-Ա/2 հրամանի համաձայն

կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Արհեստական բանականություն և տվյալագիտություն», «Քվանտային տեխնոլոգիաներ», «Ռոբոտատեխնիկա» մասնագիտություններով գիտական թեմաների հայտերի մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված նախագծերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Գիտական թեմաների ֆինանսավորումն սկսել 2020 թվականի նոյեմբեր ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին:

Նախարար

Արայիկ Հարությունյան

ՑԱՆԿ

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ի N 704-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ», «ՔՎԱՆՏԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ», «ՌՈՐՈՏԱՏԵԽՆԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ

| Հ/հ | Ծածկագիր | Անվանում | Ղեկավար | Գիտական կազմակերպություն |
|-----|---------------|---|-----------------------------|---|
| 1 | 20TTAT-AIa014 | Մեքենայական ուսուցմամբ հզորացված կանխազգուշացնող անալիտիկա, ամպային տվյալների կենտրոնների համար | Պողոսյան Առնակ Վալերիի | ՀՀ ԳԱԱ «Մաթեմատիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 2 | 20TTAT-AIa024 | Կիսավերահսկվող ուսուցման ալգորիթմների հետազոտում | Խաչատրյան Հրանտ Հարությունի | «ԵՐԵՎԱՆԷՆ» գիտակրթական հիմնադրամ |
| 3 | 20TTAT-QTa003 | Քվանտային ինֆորմացիա և մեքենայական ուսուցում՝ ընդհանուր մոտեցումներ և գործիքներ | Ալլահվերդյան Արմեն Էդուարդի | «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ |

| | | | | |
|---|---------------|--|--------------------------|---|
| 4 | 20TTAT-QTc004 | Հեռահար բազմաչափ խճճվածության դետերմինիստիկ գեներացիան քվանտային հաղորդակցության համար | Գոգյան Անահիտ Լյովայի | ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 5 | 20TTAT-QTa009 | Կիտակի տորիկ կողը և եռաչափ մոդելների ինտեգրելիությունը | Սեդրակյան Արա Գրիգորի | «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ |
| 6 | 20TTAT-RBe016 | Կոլեկտիվ արհեստական բանականությամբ ինքնակազմակերպված անօդաչու թռչող սարքերի երամի վթարակայուն մշտադիտարկման և նպատակային առաջադրանքների իրականացման ծրագրային համակարգ | Պողոսյան Վահագն Սուրենի | ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 7 | 20TTAT-RBa023 | Կառավարելի բարձր մթնոլորտային հարթակ | Խաչատրյան Վաչիկ Հրաչյայի | «ԱՅԱՍ» տիեզերագիտական ընկերություն ՀԿ |